

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄԵՆԿ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

«Մշակ» տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տասն
և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝
6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի
ամսականը՝ 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղարայան և Բարձրակայա փողոցն. անկիւնը):
Ուրիշ քաղաքներից պէտք է դիմել այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция „Мшакъ“, իսկ
արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „Mschak“.

Յայտարարութիւնները ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Խաղաղ ճանապարհով. — Ներսիս ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Պրոֆէսոր Իւրի Արնոլդ. Նամակ Ա-
րարժանանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւր-
քայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին
լուրեր. — ԽԱՆՆ. ԼԻՒՐԵՐ. — ՀՆԻՒԱԳԻՐՆԵՐ. —
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բա-
նաստեղծը և հերոսը:

ԽԱՂԱՂ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թէ՛հրանից՝ վստահելի աղբիւրից ստա-
ցած մեր տեղեկութիւնները հաղորդում
են, որ պարսից կառավարութիւնը վեր-
ջերս դիւանագիտական այնպիսի մի քայլ
արեց, որ, անկասկած, համակրութեամբ
պէտք է ողջունել խաղաղութեան բոլոր
բարեկամների կողմից: «Մշակ» 1894 թ.
№ 56-ի մէջ տպւած առաջնորդող յօդու-
ածից ընթերցողները գիտեն, որ Պարսկաս-
տանի և Իտալիայի մէջ 25 տարուց ի վեր
ծագել է մի վեճ՝ առևտրական մի խնդրի
վերաբերմամբ, որ ոչ միայն առաջ բերեց
դիպլոմատական յարաբերութիւնների խը-
զուէն այդ երկու պետութիւնների մէջ,
այլ և առևտրական յարաբերութիւնների
խզուէն, մի հանգամանք, որ ահագին վը-
նասներ է հասցնում երկրներին: Իտալիան
և Պարսկաստանը հնարաւորու-
թիւն չունեն դիմել զենքի՝ իրանց մէջ
ծագած վեճը լուծելու համար, բայց զրա
փոխարէն երկու պետութիւնների դիպլո-

մատիան աշխատում էր ամեն տեղ մի-
մեանց փնտրել հասցնել խիստ և ճշնոյդ
միջոցներ էր գործադրում միմեանց հա-
տանքների դէմ, որոնք այս և այն դեպքով
ստիպւած են լինում գնալ Իտալիա կամ
Պարսկաստան: Անկասկած՝ թէ՛ մարդասի-
րական, թէ՛ պետական-միջազգային տեսա-
կետից ամենէն ցանկալի չէր երկու եր-
կրներին փոխադարձ թշնամութիւնն ու ա-
տելութիւնը:

Այժմ, Պարսից Մուզաֆֆէր-Էրզին Նա-
հը, համակերպելով խաղաղութեան բա-
րեկամների յորդորներին, համաձայնել է
լուծել վեճը միջազգային միջնորդ
գաղափարի միջոցով և միջնորդ գա-
ղափար՝ երկու կառավարութեան համա-
ձայնութեամբ, բնորոշել է Նվերիայի Օսկար
Թադաւորը, մի բնորոշ չէզոք անձնա-
ւորութիւն: Երկու պետութիւնները ևս
պարտաւորվել են անպայման հնազանդել
Օսկար Թադաւորի որոշման և վերջ տալ
25 տարեկանից ի վեր գոյութիւն ունեցող
վեճին: Իսկ այդ վեճը կայանում է նրա-
նում, որ իտալական կառավարութիւնը
պահանջում է պարսից կառավարութիւնից
3 միլիոն ֆրանկ վարձատրութիւն իր մի
հայտնաբեր կրած փնտրների համար, ա-
ռարկելով, որ այդ փնտր առաջ է եկել
պարսից պաշտօնեաների գործած զեղ-
ծունեւորից:

Արդեօք յօդուտ Պարսկաստանի թէ՛ Ի-
տալիայի կը վճռվի վեճը, այդ այնքան

կարեւոր չէ. կարեւորն այն է, որ «Մշա-
կ»-ի միջազգային դաշնակցութեան
հրաւերը չմայն բարբառող յանապատի չէ
մնում, որ նոյն իսկ բռնապետական իրա-
ւունքի վրա հիմնւած երկրներում հետզ-
հետէ ճանապարհ է հարթում իր համար
այն գաղափարը, թէ ժամանակ է ջնջել,
վերացնել մարդասպան պատերազմները և
պէտք է աշխատել միջազգային վեճերը լու-
ծել միջնորդ գաղափարի և արաւանների ձեռ-
քով: Այդ կողմից շատ իրաւական և
համակրելի է պարսից կառավարութեան
քայլը, իսկ այդ քայլը մի երկրի կողմից, ուր
արդարադատութիւնն ու իրաւունքը շատ
խախտու հիմքերի վրա են հաստատուած,
պէտք է իրաւունքի «Մշակ»-ի միջ-
ազգային դաշնակցութեան» անդամներին,
աւելի մեծ եռանդով, աւելի ոգևորու-
թեամբ գործելու, մինչև որ իրաւորձի
այն վեճ նպատակը, որ նա դրել է իր
համար. — «Եղբայրական համաձայնութիւ-
նը ազգերի մէջ առաջ կը բերի պատե-
րազմների ջնջումն. կովերը ուրեմն կըս-
ւի դէմ»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐՅԵՍՈՐ ԻՐԻՒՅ ԱՐՆՈՂԻ

Սիմֆերոպոլ, օգոստոսի 1-ին
Յուլիան 7-ին, Սիմֆերոպոլի մօտ, Բարաքաշի
կայանաւորում մեռաւ յայտնի երաժիշտ—պրոֆե-
սոր Իւրի Արնոլդ 87 տարեկան հասակում: Այս
ամառ հանգուցեալը Պետերբուրգից գալով Ղարմ
իր որդեգրած աղջկայ հետ (երգեցողութեան
յայտնի դասուսուցիչ Պետերբուրգում Ա. Վլա-
միր-Արնոլդ), մտադիր էր հանգստանալ ձմեռա-
յին աշխատանքից յետոյ իր մտերիմների և ծա-
նոթների շրջանում, բայց... յաւիտեական հան-
գիստ գտաւ այստեղ:

Իւրի Արնոլդի անունը յայտնի է ոչ միայն
Ռուսաստանում, ուր նա 30-ական թուականնե-
րից սկսած անդադար աշխատում էր երաժշտա-
կան ասպարիզի վրա, այլ և Եւրոպայի երաժը-
տական շրջաններին: Հանգուցեալն իր պատ-
կառելի հասակում տարօրինակ անձնաւորու-
թիւն էր՝ մեղք և եռանդի թարմութեան կող-
մից, մինչև վերջին ժամանակ նա երկուստեք
դական աշխույժով պարելու էր իր մասնա-
գիտութեամբ և եթէ մի քանի տարի ևս ապրէր
նա, պիտի աւարտէր իր թերակատար թողած

աշխատութիւնները, որոնք մասնագէտների կար-
ծիքով նշանաւոր տեղ պիտի բռնէին երա-
ժշտական գրականութեան մէջ: Նրա աւար-
տած գործերից կարող ենք այստեղ յիշատա-
կել իրաւորագրւածները՝ Полная теория музыки,
Теория древне-русского церковного и народного пѣ-
нія, Гармонизация церковного пѣнія, Теория по-
становки голоса, Постѣдный день Помпей (опера),
և մի շարք բովանդակ և կամերային մուշկայի
շարագրութիւններ: Հինգ տարի սրանից առաջ
նա հրատարակեց իր յիշողութիւնները երեք հա-
տորի մէջ, որոնք պարունակում են իր մէջ հե-
տաքերի չէզոք ուսուցիչական և գրական-
նութեան պատմական անցեալից. հեղինակի
կենդանի ոճը, սուր միտքը և անաչառ ոգին
տալիս են այդ աշխատութեան առանձին նշա-
նակութիւն, որից դուրս են պարբերական գրա-
կանութիւնը հեղեղող անձնավստահ հեղինակնե-
րի չոր ու անհոգ յիշողութիւնները: Կարգաւոր
այդ գրութեանը այն էջերը, որոնք վերաբերում
են հեղինակի կենսագրութեան, մարդ պարմա-
նում է, թէ ինչպէս այդ երաժիշտն այդքան
դաւն օրեր տեսնելուց յետոյ՝ կարողացել է
մինչև իր ծերութիւնը պահպանել իր մէջ մեղքի
և զգացմունքի անաղատ թարմութիւն, ինչպէս
կենքը՝ որ իւրովի որդին է եղել հանգուցեա-
լը, չէ յեղաշրջել նրա ներքին աշխարհը, չէ կաշ-
կանդել նրա ոգին, չէ մաշել նրա կամքը: Մին-
չև իր կենքի վերջին օրը հանգուցեալը մնաց
լի աշխույժով և եռանդով օպերիմիստ:

Արնոլդ իր բարձրագոյն ուսումնաւ ստացել է
Դորպատի համալսարանում և ուսել է այնտեղ
Նիկոլայ I Կայսերի հաշուով: Երաժշտական գոր-
ծունեութիւնն սկսել է, ինչպէս ասացանք, 30-ա-
կան թուականներին, ուրեմն՝ աւելի քան 60 տա-
րի անդադար աշխատել է իր մասնագիտու-
թեամբ: 1865 թ. իւրի Արնոլդ հեռացաւ Փետրա-
նիա և Լէյպցիգում հաստատեց իր քնակութիւ-
նը մինչև 1870 թ.: Այնտեղ նա մեծ անուն
հանց իր գրութեանով, որոնք հրատարակ-
վում էին գերմանական նշանաւոր երաժշտական
հրատարակութիւնների մէջ: Այդ իսկ ժամանակ
նրան առաջարկում են գերմանական երաժիշ-
տների ընդհանուր դաշնակցութեան քարտուղարի
պատասխանատու պաշտօնը, որ նա մեծ չնոր-
քով կատարեց մինչև իր վերադարձը Ռուսաս-
տան: 1870 թ. իւր Սովկայի կոնսերվատորիան
նրան ընտրեց երաժշտութեան պրոֆեսոր, սակայն
նա այնտեղ երկար չը մնաց մի քանի անհամա-
ձայնութիւնների պատճառով և մնալով Սովկա-
յում, սկսեց մասնաւոր դասերով և դասախո-

ճակատը, ինչպէս զարգարում են նշեցեալի
ճակատը: 25 կարելի ասել, թէ Իրանդիայի ա-
նունը յաճախ կամ առանձին սկսում է յիշու-
այդ ուսանողների մէջ: Ոչ. հեղինակը յատուկ
անուններ չառ քիչ է գործ անում, որովհետեւ
այդ անվանումը էր: Բայց նա մերթ գովաբա-
նում էր իր սիրելի օրերիցին այնպիսի դար-
ձաւաններով, որոնք կարող էին ուղղված լինել
միայն Իրանդիային, մերթ սկսող կնոջ բերանը
դնում էր այնպիսի վտեմ խօսքեր, որ ընթերցո-
ղը գուշակում էր իսկոյն, թէ հարցն հողեղն
կնոջ մասին չէ, իսկ դարձուածների երաժշտա-
կանութիւնը, ինչպէս և հին քրիստոնէական այ-
լաբանական երգասացութիւնների մէջ, աւելի
զօրեղանում էր բանաստեղծական տպաւորու-
թիւնը:

Արդեօք ինչ պատահեց Մուրի թեթևասկի ու-
սանաւորների լոյս տեսնելու և այդ զարմանքի
արժանի բանաստեղծական երկերի յղացման ժա-
մանակամիջոցում: Այդ՝ մի երկար և տխուր պատ-
մութիւն է: Արդէն այդ ժողովածուի չորրորդ ու-
սանաւորն սկսվում է այսպէս *).

Ո՛հ, մի չնշար անունը նորա,
Թող տուր ստուերում ննջէ նա խաղաղ,
Ուր որ թաղված են վերջին նշխարը՝
Պաղ և չը յարգված:

Լուեկան, տխուր և միմի հոսն
*) Այս և հետեւող ոտանաւոր հատուածը մեր իրեն-
դեբով անգլիէնէն ընագրել թարգմանել է պ. Թ.
Մեղայեան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆԱՍԵՂԾԸ ԵՒ ՀԵՐՈՍԸ

(Իւրանդական սարսափները հարելումանի տւեթով)

III

Հետեւել տարիները Մուրը առաջին անգամ
հանդէս եկաւ իրեն բանաստեղծ: Ապստամբու-
թեան ճնշման ժամանակ տեղի ունեցած սար-
սափները տառապանքի ոչ մի նիւթ չէին տալիս
նրան և առհասարակ ստեղծել էին այնպիսի
պայմաններ, որոնք բոլորովին աննպաստ էին
քաղաքական բանաստեղծութեան համար: Բացի
դրանից, Էմմէտը հեռացել էր և նրա աղբիւր-
ութիւնը Մուրի վրա առժամանակ դադարել էր:
Բնականօրէն մեր երիտասարդ բանաստեղծը՝
որ ի ընէ օժտված էր բերկրալից ու թեթև բա-
նաստեղծական երկեր յորինելու: ձերբով, գնաց
այն ճանապարհով, որ բաց էր նրա տաղանդի
և հասակի համար.—սկսեց գրել անակրէ օ-
նական երգեր և հրատարակեց նրանց ժողո-
վածուն, երբ դեռ քսան տարեկան չը կար՝
նուիրելով դրանք արքայազն Ռեդեմփին, որի վրա
ապստամբաներն այն ժամանակ մեծ յոյսեր էին
դնում, իսկ 1801 թ. լոյս ընծայեց Poems of
Thomas Little (Փոքրիկ Թոմասի պոէմաները),

Փաշալեքը/ված զրանով, նա անխնայ եռանդով
լսեց նոր դաւադրութիւն կազմակերպել երկրի
որը մասերում: Նա համոզված էր, թէ 1798
ւ. յեղափոխութիւնն անապշտ անցաւ այն պատ-
ւառով, որ զարմանալիս յինսկէտ չուէրէ իր-
անցիպալ մի պայքարալարում: Ուստի ման վճռե-
մենից առաջ զրաւել Գորբլինը եւ հասանաւոր
աւարտողը, որի մուտքը միշտ բաց էր լինում
նախ երեկոյ: Գիշեր-ցերեկ անընդհատ հսկում
էր նա ապստամբութեան նախապատրաստու-
թիւններին: Գորբլինը զանազան լծադերում
արձված էին մի քանի տներ, որտեղ անդադար
ատորաստվում էին ղէներեր, ուսմբեր եւ վառող-
ւ ինքը միշտ շրջապատված էր լինում աջա-
ցիների փերթիկ խմբակով: Երանը, թիւով 15, մեծ
ստամբ հասարակ ժողովրդից էին եւ թիւը էր
կապի իրան միմիայն կարճատև հանդիստ վա-
ղիկ պահեստներէից մէկում գցած դռակի վրա:
Վարը մարդուց աւելի գիտէին զազանները,
այց նրանց մէջ չը գտնուէր ոչ մի դաւաճան եւ
տաժարութիւնը ոչ մի կասկած չուէրէ այդ
տարաստուկ լիւնների մասին: Էյմէտի դրամա-
նէ միջոցները հասանք՝ ծախսելով այդ պատու-

ձեռքն յանձնել իրեն, որ իր հօրն ու մօրը մէկ հատիկն, ուսեալ, բարեբաւոյ, ազնուական և... դեղեցիկ լինի: Բարձրաստիճան եկեղեցականը մօրուսը ձեռք առնելով բաւական մտածելէ յետոյ՝ պատասխանեց է վեհօրէն:

— Զուսակս, եթէ ըստ ուղածիդ պէտք գտնեմ... միթէ...

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Թ ա ռ ի զ յ յ յ ի յ 30-ին
Գիշերն անցաւ խաղաղ: Այսօր առաւօտ թուրքերի թաղերից և բազարներից լսվում են վայրենի աղաղակներ՝ Վեհ Այի. եւս Հուսէին...: Գնալով աղբուկ ու չիփովիւնը շատանում են. փռները բաց չեն. հաց չը կայ. աւուր աշխատանքով ապրող հազարաւոր մարդիկ կերակրւում են պտուղներով: Քրիստոնեաների թաղերի — Բերդաթաղի դռները փակված են. թաղապետի կողմից աշխույժ գնդապետական հակադրութիւնը թէև խտուրթեամբ շարունակվում է, բայց կատարել ամբողջ մարդ ու կին խառն, յաւըղեցաւ Բերդաթաղի արևմտեան դուռը բաց անել և ահաբեկ ձայներով ու հարայ տալով խուժել առաջ հիւպատոսարանը՝ պաշտպանութիւն և օգնութիւն խնդրելու: Տեսարանը հետաքրքիր և միանգամայն սոսկալի էր. 1,000-ից աւելի կանանց և մարդկանց բազմութեան դժուրալ թղտղները ակնայն էին խաղաղութիւն: Սկզբում քրիստոնեայ տարրը մեծ երկիւղ կրեց, թէ մի գուցէ զայրացած ամբողջ յարձակում գործէր հայերի տները վրա: Սակայն ոչ մի դէպք և ոչ մի անշնչանց ցոյց հայերի դէմ. յուսահատ ժողովրդի ցանկութիւնը՝ առաջաց հիւպատոսարանը ապաստանել էր, ինչ որ չէր աջողել նախընթաց օրը: Հիւպատոս Պետրով ընտանեկան գրասենյակում է մտաւայ ամբարանցում. հիւպատոսարանի պաշտօնեաներն ստիպված էին ընդունել եկողներին: Մինչև երեկոյ ամբողջ սպասեց, բոլորեց, բայց հիւպատոսը չեկաւ: Ազգեցութեան տէր պարսիկ վաճառականները յորդորներն ու սպանալիքները՝ հիւպատոսարանից դուրս դալու համար, ոչ մի հետևանք չունեցան: Մի յայտնի սէյիփ փորձեց, յանուն իսլամութեան, հրաւեր կարգաւ, որ դուրս գան հիւպատոսարանից և փառաւոր ծեծ վայելեց՝ փայտերով զինված պարսիկ կանանցից: Սէյիփը՝ լինելով մարդաբանների զարմից, ապառ է Պարսկաստանում նոյն իսկ կառավարութեան մարմնական պատմիչներից, ուր մնաց անհատը, որ իրաւունք չունի ձեռք բարձրացնել սէյիփի վրա. բայց Բիշնյանականութիւն ունէր դրսում գծում փաթկանքների վանդակում, ներսում լուսադուրկ հիւպատոսարանում բանարկված ու բազմապիսի թշուառութիւններէ մէջ՝ մարդկային արժանաւորութիւններից զրկված պարսիկ կնոջ համար... Այսօր թուրք կնոջ զայրոյթն ու կատաղի արտայայտութիւնը շատ նման էր արաբով ուսմբի: Գիշերը կանանց և մարդկանց մի մասը մնաց հիւպատոսարանում. նրանց տրվեց հիւպատոսարանից թէյ, պտուղ, կանանց ծխախոտ և բոլորին ընթերցել: Թագաժառանգը, նահանգապետ Ամիր-Նիզամը և հիւպատոս Պետրով ըստաբարձ չեն: Հաց չը կայ. գիշերը հակադրութիւնը խիստ էր և անցաւ հանգիստ:

Յուլիսի 31-ին, ուրբաթ

Այսօր թուրքերի աղաւթ օրը լինելու պատճառով երկիւղ ու հետաքրքրութիւնն աւելի շատ են: Հիւպատոսարանի և մասնաւոր անձանց կողմից տրված յոյսի և վստահութեան վրա՝ հիւպատոսարան մտնողները ցրվեցին: Հիւպատոս Պետրով խիստ բողբոջեց արեց Թէհրան և Թաւրիզի կառավարութեան՝ պահանջելով կարգադրութիւն տրելով անխնայութեան մասին: Նոյնն արին միւս պետութիւնների հիւպատոսները: Թագաժառանգն այսօր եկաւ Թաւրիզ Զանգու ամառանցից, ամբողջ օրը հեռագրական փոխանակութիւններ եղան Շահի և թագաժառանգի միջև. փոխանակութիւն Ամիր-Նիզամի և Թէհրանի միջև: Ամիր-Նիզամը տակաւին չեկաւ, հակառակ ընդհանուր ժողովրդի ցանկութեան: Բերդաթաղի դռները ամբողջ օրը փակված մնացին, որպէս զի թուրք խմբերը հայերի թաղերը չը խուժեն և նորանոր խմբեր առաջ հիւպատոսարանը չը մտնեն:

Ցերեկվայ ժամը 12-ին՝ իւր կենդանի յայտարարութիւն կառավարութեան կողմից՝ ջառ (մուշեթով) կարգադրեց և յայտարարեց, որ վաղվանից փռները կը բացվեն և հացի լիտրը պէտք է լինի 16 կոպէկ փոխանակ 24 կոպէկի: Կարճեալ հացի մեծ պակասութիւն, բայց աղ-մուկ չը կայ: Բազարները փակ են և ամեն մարդ իր տանը: Վստահելի աղբիւրներից լու-

րեր են հանում, թէ Ամիր-Նիզամի և թագաժառանգի մէջ ծագել են անբաւականութիւններ, և թէ Ամիր-Նիզամը ուղեցել է՝ առանց Թաւրիզ մտնելու, թողնել պաշտօնը և գնալ Թէհրան: Ընդհանրապէս դէպքեր տեղի չունեցան և օրն անցաւ հանգիստ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Բոլորական «Гласъ Мира» լրագիրը, բերնելով Մակեդոնիայի վիճակը, դալիս է այն եզրակացութեան, որ մակեդոնական խնդրի խաղաղ լուծումն անհնարին է, որովհետև ամենից առաջ Բերլինի դաշնագիրն ստորագրող մեծ պետութիւններն իրանք չեն համաձայնի լուծել խնդրին այնպէս, ինչպէս իրանք մակեդոնացիներն են ցանկանում: Մենք պէտք է հասկանանք — առում է լրագիրը, — որ Ռուսաստանի ծրագրերն իրենց դէմ գնում է Անգլիան: «Բայց և Ռուսաստանին, լրագիր կարծիքով, չէ կարելի առանձին վստահութեամբ վերաբերվել: Նա աւելի լաւ է համարում մշտական վարի մէջ պահել Թուրքիային, սպառնալով շարունակ լուծել այդ խնդիրը, որպէս զի կարողանայ նորանից իր պահանջն ստանալ: Ինչ վերաբերում է պահանջված բէֆօրմներին, միամտութիւն կը լինէր սպասել, որ նրանք երբ և իցէ կը մտցնեն: Թուրքիան ոչ մի շահ չունի բէֆօրմները մտցնելու, իսկ մեծ պետութիւնները չեն անդի: Այդ պատճառով մակեդոնացիները պէտք է իրանք աշխատեն ինքնավարութիւն ստանալ: Նրանք պէտք է զենքը ձեռքին ձեռք բերեն այդ ինքնավարութիւնը: Բայց դրա համար միջոցներ են պէտք. հարկաւոր է, որ մակեդոնական ինտելիգենցիան թողնի իր երկպառակութիւնները և միանայ: Միայն նրա միաբանութիւնից և անձնագործութիւնից է կարելի թշուառ քրիստոնեայ նահանգի ազատութիւնը թուրքաց լծից:

— «Piccolo» իտալական լրագիրը հաղորդում է, որ Չերնոգորիայի և Բոլղարիայի մէջ պաշտօնապէս դաշին է կնքվել, որին պէտք է միանան Բուլղարիան և Յունաստանը: Բալկանեան պետութիւնների այդ դաշնակցութիւնը, որ կընթել է Ռուսաստանի հովանաւորութեան տակ, նպատակ ունի պահպանել թերակզում status quo, բայց մի և նոյն ժամանակ պէտք է զսպի դրացի մի մեծ պետութիւն և ան ձգտումն դէպի հարաւ:

— Հնդկաստանի նոր փոխարքայ սըր Կըրզոն, ինչպէս յայտնի է, բաւական նշանաւոր դրող է: Յայտնի են նրա երեք աշխատութիւնները՝ «Ռուսաստանը Միջին Ասիայում», որ հրատարակվեց 1889-ին, «Պարսկաստանը և պարսից հարցը» — 1892-ին և «Հնդկաստանը Արևելքի գործը» — 1894-ին: Այդ աշխատութիւնների համար անդրկական աշխարհագրական ընկերութիւնը տուել է Կըրզոնին ոսկեայ մեդալ: Բացի դրանից նա նշանաւոր հոստոս է. նա կողմնակից է ազգու և վճարական քաղաքականութեան Հնդկաստանում և նրա փոխարքայ նշանակվելը ցոյց է տալիս, որ անգլիական կառավարութիւնը մտադիր է խիստ դիմադրութիւն ցոյց տալ Ռուսաստանին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հռչակաւոր իտալացի Մարկոնին, նա՛ որ աւելի է առանց թիկի հեռագրի գիւտը, նորերն մի աւելի նշանաւոր գիւտ է արել: Այդ նոր գիւտի միջոցով, առանց դիմում բռնկեցնող նիւթերի օգնութեան, կարելի է օդը ցնդեցնել հրահաւոր նաւը, եթէ նոյն իսկ 20 ծովային մղոն հեռու լինի նա կանգնած: Այդ միջոցը՝ ելեկտրականութիւնն է: Հնարողը՝ հաւաքում է մի դրամամոմբենայի մէջ ելեկտրական հոսանք և այդ հոսանքն ուղղելով՝ նաւը վրա, բռնկեցնում է նրան:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԵՑ

ԱՄԵՐԻԿՈ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՄԱԴՐԻԴ, 11 օգոստոսի: Մանիլայից հեռագրում են, որ այնտեղ ստացված չէ հեռագիր խաղաղութեան դաշին կնքելու մասին: Հեռագրի մէջ ասված է, որ ապստամբները շարունակում են կռիւ սպանիական զօրքերի հետ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 11 օգոստոսի: Մեծ պալատում ներկայացաւ Նոյա Կայսերական Մեծութիւններին բրիտանական նոր զետպան Զարդ Ստիւարտ-Սկոտ զետպանատան բոլոր անդամներին հետ:

Կ. ՊՈԼԻՍ, 11 օգոստոսի: Ֆինանսների միւնիստրութեան և օսմանեան բանիլի մէջ կայացած համաձայնութիւնը Ռուսաստանին դեռ չը վճարված պատերազմական տուգանքի մասին, կը ստորագրվի չորեքշաբթի. չը վճարված 472,000 լիրան պէտք է արվի 1899 թ. և 1900 թ. յուլիսի 1-ին 236,000 լիրա ամեն տարի, իսկ գերիները պահպանութեան համար ծախս-

ված 550,000 լիրան պէտք է վճարվի դրանից յետոյ չորս տարում. առաջին երկու տարին՝ 125,000-ական, իսկ վերջին երկու տարին՝ 150,000-ական:

ՊԱՐԻՋ, 11 օգոստոսի: Իտալաւոր Ֆաբր հաղորդեց հանրապետութեան պրօկուրօրին Պիկա-րի և Լեբրուայի դործի դօկումենտները և իր որոշումը կը կայացնի միայն այն ժամանակ, երբ դօկումենտները յետ կը ստանայ:

ԽՄԱԿԻՐ՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչ՝ ԱՆԻՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՐ ՀԻՒՆԻՍՏԱՆՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՈՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժական, վնասերական (սիֆիլիս) և միլատեւ. Տ. Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և ներարկային Տ.

Չ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց հիւանդ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայի Տ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—12—1 ժ. ներքին, և միատեսական Տ. ակնային, կոկորդի և թիկ Տ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Վ. Մ. ՄԱԽՈՎԻԼԱՉԷ—6—7 ժ. ներքին և երեխայի Տ. ներարկային և մարմնի Տ.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.

Տ. Ի. ԲՈՒԿԵՆԿՈ հիւանդանոցումը ընթիւական

Ա. ՓՐԻԴՈՆԵԱՆ և ԸՆԿ. ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Ներքին փոխառութեան տոմսերն ապահովացնելու համար՝ մինչև նոր փոփոխութիւն անելը՝ վերցնում է.

- 1 ռ. 75 կոպէկ 2-րդ փոխառութեան տոմսին, առ 1-ն սեպտեմբերի 98 թւի:
 - 1 ռ. 40 կոպէկ 3-րդ » » առ 1-ն սեպտեմբերի 98 թւի:
- Բացի դրանից վերցնում է 15 կոպ. գերբային տուրք:
- Գրանցեալը տոմսերը չէ ապահովացնում ոչ հեռագրով և ոչ վերադիր վճարով:
- (չ. ու. ե.) 1—3

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, ԹԻՖԼԻՍՈՒՄ

Վ ա ճ ա ռ լ զ ու մ ե ն հ ե ա ե ե ա լ ն ո ռ գ ր ք ե ռ ք

	Բ.	Կ.
ԼԷՕ. «Մէլերի աղջիկը», պատմական վեպ, Թիֆ. 1898 թ.	1	30
ՇԱՀՐԻՄԱՆ ՎԱՀ. «Մարդու մը պատմութիւնը», Բուսպու, 1897 թ.	25	
ՇԱՆԹ. «Վերմիտ», Թիֆ., 1898 թ.	60	
ՊԵՏՐՈՍԵԱՆ Յ. «Այգետիրական օղբործութիւն», Թիֆ., 1898 թ.	40	
ՏԱՂԱՌԱՐԵԱՆ Ն. «Մանրէաբանութիւն», Կ. Պոլս, 1898 թ.	75	
ԲԱՅԺԻ. «Սամուէլ», ա. բ. գ. գրքը, բ. տպ. Վիեննա, 1898 թ.	3	50
ՓԱՓԱՅԵԱՆ Վ. «Սանթո», (ճայ բոլաների կեանքից), Թիֆ., 1898 թ.	30	
ԳԱԼԱՆԹԱՐԵԱՆ ՈՍԿ. «Ս. Գլորիայ ուխտատեղի հայոց Վլադրայ», Թիֆ., 1896 թ.	30	
ՇԵԼԼՈՒԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ, թարգ. Ս. Հ. Թիֆ., 1898 թ.	50	
ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ և նոյա փոխառ. օգնութեան ընկ. թարգ. Տ. Ի. Թ. Թիֆ., 1898 թ.	20	
ԻՆՉԷ ԷԶԵՐԻԱՌԷ, թարգ. Վ. Աղայիանց, Թիֆ. 1898 թ.	10	
ՍԵՆԿԵՎԻԻԶ. «Յո երկուս», թարգ. Լիսիցեանց Ստ. Թիֆ., 1898 թ.	1	50
ԻԲԵՐՍ. «Մարդ եմ», թարգ. Մալխասեան Ստ. Թիֆ., 1898 թ.	1	
ԼՈՒՆԵՎԵՎԻԻՉ Վ. «Կենդանիների աշխարհում», թարգ. ու. Թիֆ., 1898 թ.	30	
ՇԵՔՍՊԻՐ. «Արքայ Լիր», ողբերգ. 5 արար., թարգ. անգլիերէնից, Մասեհան Յովհ.-Խան. Թիֆ., 1898 թ.	50	
ՎԼԱԴԻՄԻՐ ՍՅՅՈՒՄ. թարգ. Մարազեան Տաճատ քահ. Թիֆ. 1898 թ.	20	
ԳԻՐԿԱԿԱՆ ՍՊԵՏՈՒԹԻՒՆ. թարգ. դերմ. Բաբայան Լ. Շուշի, 1897 թ.	15	
КНЕЙПЪ. „Мое водолечение“ К. 1898 թ. ամուր կաշեկազմ	1	40
» » » լայնական	1	15
Պէտք է դիմել ուղղակի այս հասցեով՝ ТИФЛИСЬ, Центральная Книжная Торговля իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Librairie Central. (չ.) 1—1		

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Չ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՏԱՍՆԵՐԹԵՐՈՐԻ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել դործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական հետեւութիւն, 2) Առևտրական Քաւաքանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Փուլաբանութիւն համընթիւ վրա, 5) Առևտրական թղթախցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանօնադրութիւն և 7) Գեղադրութիւն, վատ ձեռքի ուղղելը:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում: Սօլախում, Ալեքսանդր Փրոքօֆով տանը, № 9, Սերգիեւկայայ և Նազօրիայայ փողոցների անկիւնում: Մրաշխիւ և կանօնները կարելի է ստանալ ձրիապէս երբ. Մովսիսօֆների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբաղադրացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэляну. (չ. շ.) 18—25